ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

Երվանդաշատի
Թիվ 38-Ա

գյուղապետի
19.12.2019թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 8.1, 10, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձ Նատալյա Աղաջանյանի դիմումը՝

Որոշում եմ.

1.Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի Ազատության փողոց թիվ 27 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Համլետ Շավոյանին պատկանող հողամասում ինքնակամ իրականացրած ընդհանուր 70,1քմ մակերեսով՝ բնակելի տուն 18,8 քմ մակերեսով կառույցը, ծածկ 34,2 քմ և ծածկ 17,1 քմ ճանաչել օրինական:
2.Ընդունել ի գիտություն, որ
1)կառույցի պահապանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2)շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Սահմանել, որ հաղամասի սեփականատերը.
1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Երվանդաշատ համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ հաշվարկված 21815 Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը
2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
4.Սահմանել, որ
1)սույն որոշման ընդունման օրավանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Հ.Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

Երվանդաշատի
Թիվ 39-Ա

գյուղապետի
19.12.2019թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 12.12.2005թ. թրվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 16.06.1995թ. թիվ 906 սեփականաշնորհման պայմանագրով Համլետ Շավոյանին սեփականշնորհվել է Երվանդաշատ համայնքի նախկին կենցաղի տունը: Հաշվի առնելով, որ կենցաղի տան սեփականաշնորհման պահից մինչ օրս կենցաղի տունը Համլետ Շավոյանի կողմից օգտագործվում է որպես բնակելի տուն: Կենցաղի տան սպասարկման համար նախատեսված հողամասը կադաստրային քարտեզով հանդիսանում է բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում և չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Համլետ Շավոյանին պատկանող կենցաղի տան սպասարկման համար առանձնացված 0.0183 հա մակերեսով հողամասի նկատմամբ Համլետ Շավոյանի իրավունքը:

2.Համլետ Շավոյանից գանձել 0.0183 հա հողամասի կադաստրային արժեքը:

3.Համլետ Շավոյանին սեփականաշնորհված 88.47 քմ մակերեսով կենցաղի տան գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի տուն:

4. Անշարժ գույքը հասցեավորել Երվանդաշատ համայնք Ազատության փողոց թիվ 27 բնակելի տուն հասցեով:

5.Նախկինում տրված սխալ որոշումները, քաղվածքները և գրությունները համարել ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ համարել ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Հ.Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

Երվանդաշատի
Թիվ 40-Ա

գյուղապետի
24.12. 2019թ.

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 2387-Ն որոշման 48-րդ կետով, հիմք ընդունելով Երվանդաշատի ավագանու 2006 թվականի հուլիսի 7-ի N3 որոշումը և Վարդան Աղաբեկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վարդան Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող 23-2 ծածկագրի անշարժ գույքին վկայական 1485206 տրամադրել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Երվանդաշատ համայնք, Բերդակի 2 նրբ. 2 տնամերձ հողամաս» հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ համարել ընդունման պահից:

Համայնքի ղեկավար / Հ. Ավետիսյան